ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հ Հ, Կոտայքի մարզ, Գառնի համայնք, Ս. Շահումյան 4,
Garnihamaynq@mail.ru, **հեռ. +37441125156**

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

24/11/2023թ. **գ.Գառնի**

2023 թվականի նոյեմբերի 24-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի վարչական շենքում տեղի ունեցավ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու որոշման նախագծը հաստատելու վերաբերյալ հանրային քննարկումը:

Բաց լսումների բացման խոսքով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանը, ով մասնավորապես նշեց, որ 2023 թվականի նոյեմբերի 24-ի բաց լսումների համար հիմք է հանդիսացել համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 02-ի № 1069 որոշումը, ըստ որի համայնքապետարանի տեղեկատվական կառավարման համակարգում տրվել է հրավերի հայտարարություն:

Մուտքի խոսքով հանդես եկավ ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայքի ղեկավար Տիգրան Պողոսյանը, ապա խոսքը տրամադրեց «Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանին:

Լսումների ընթացքում, «Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյանի կողմից ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու որոշման վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն:

«Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ Արփենիկ Բաղդասարյան կողմից ներկայացվեց Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեի նախագշում արված փոփոխությունները:

Խոսվեց նաև Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեով կատարվող ծախսերի մասին:

Այնուհետև, աշխատակազմի քարտուղար՝ Լիպարիտ Թադևոսյանի կողմից ներկաներին ներկայացվեց, որ Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ կամ առարկություններ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից չեն ներկայացվել:

Տեղի ունեցավ նաև մտքերի փոխանակություն Գառնի համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյանի և լսումների ներկաների միջև:

Բաց լսումները ավարտվեցին ժամը 16.[55]-ին :

Լսելով վերոգրյալը, հանրային լսման մասնակիցները առարկություններ չհայտնեցին և կարևորելով ծրագրերի իրականացումը, տվեցին իրենց համաձայնությունը՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու որոշումը հաստատելուն:

Լսումների կազմակերպիչ՝ **Լիպարիտ Թադևոսյան**

Համայնքի ղեկավար՝ **Տիգրան Պողոսյան**

«Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման» բաժնի պետ՝ **Արփենիկ Բաղդասարյան**

Խորհրդակցական մարմնի անդամ՝ **Գևորգ Մարտիրոսյան**

Արձանագրող՝ **Հասմիկ Գրիգորյան**